


Ապագա Հանդես

APAGA
Quarterly

Հայ-իրանական մշակութային եւ հասարակական եռամսյա հանդես
An International Journal of Oriental Studies



ISSN 1682-5438

Համար 71, Դեկտեմբեր , 2017 թ.

No. 71, December 2017

ԱՊԱԳԱ No. Համար 71 (86) 2017 APAGA

Հայ-իրանական մշակութային եւ հասարակական միջազգային եռամսյա հանդես
An international Quarterly Journal of Oriental studies

Արտոնատեր, Հրատարակիչ եւ Գլխավոր խմբագիր
License-holder, Publisher & Editor-in-Chief

Էդ. Բաղդասարյան / Ed. Baghdasarian, PhD.

Փոստարկղ համար 15875-9488 Թեհրան-Իրան
POBOX No. 15875-9488 Tehran – Iran

WEB: www.ApagaOnline.com and www.apagamonthly.4t.com
E-mail: apaga98@hotmail.com ISSN 1682-5438

Բովանդակություն

Հայերեն Զանգեզուրի, Լեռնային Ղարաբաղի եւ Նախիջևանի
հիմնախնդիրները

Անգլերեն Ահ ու սարսափի իշխանություն- Կրոնական
հետապնդումներ

Պարսկերեն Իրանահայ համայնքը 18-րդ դարի վերջում և
Ղաջարական տիրապետության ժամանակ

CONTENTS

Armenian The question of Zangezur, Mountanious Karabagh and
Nakhijevan

English A REIGN OF TERROR- RELIGIOUS PERSECUTION

Persian Armenian of Iran – Late 18th century and under the reign of Qajars

-
- Հոդվածների հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել խմբագրության տեսակետներին:
 - Արտատպության դեպքում հղումը «Ապագա»-ին պարտադիր է:
 - Ստացված հոդվածները չեն գրախոսվում և չեն վերադարձվում:

Subscriptions: \$ 20 per year

Գինը 5000 ռիալ

Չանգեզուրի, Լեռնային Ղարաբաղի ԵՆ Նախիջեւանի հիմնախնդիրները

Էդ. Բաղդասարյան, Գերմանիկ

Հայաստանի խորհրդայնացման հաջորդ օրն իսկ Ադրբեջանի հեղկոմն ընդունեց դեկրետ այն մասին, որ Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ այլեւս տարածքային վեճեր գոյություն չունեն, որ Չանգեզուրը, Լեռնային Ղարաբաղը եւ Նախիջեւանը համարվում են Հայաստանի անբաժանելի մասեր: Ելնելով Ադրբեջանի հեղկոմի որոշումից՝ Հայաստանի ՄԽՀ հեղկոմը 1920 թ. դեկտեմբերի 24-ին հռչակագիր ընդունեց Նախիջեւանի մարզի ինքնորոշման մասին: Սակայն թուրք-թաթարական (ադրբեջանական) ազգայնամոլ առաջնորդների հրահրումով հայոց պատմական Նախիջեւանի մարզում իշխանությունը նվաճեցին թաթար բեկերն ու խաները: Մոսկվայի պայմանագրով այն անցավ Ադրբեջանին: Տասնամյակներ շարունակ, հատկապես խորհրդային իշխանության տարիներին, մարզում հայերի թիվն անընդհատ նվազել է, տեսակարար կշիռն ընկել՝ 1916թ. 40 տոկոսից իջնելով 1926թ. 10,8 եւ 1979թ. 1,4 տոկոսի: Այժմ Նախիջեւանը լրիվ հայաթափված է:

Արցախի խնդիրը

Պետության տարածքային ամբողջականության սկզբունքը հաստատվել է 1945 թ. ՄԱԿ-ի կանոնադրության ընդունմամբ: Այն բանաձեւված իր արտահայտությունը ստացավ ՄԱԿ-ի 1970 թ. Նոր կանոնադրության մեջ:

1917 թ. դեկտեմբերին Շուշիում ստեղծվեց ,Հայ հեղափոխական կուսակցությունների եւ կազմակերպությունների ժամանակավոր խորհուրդ: Այդ մարմինը հետագայում անվանվեց ,Միջկուսակցական բյուրոն: Այն օժտված էր օրենսդիր եւ գործադիր գործառնություններով: Նոր իշխանությունը ընտրական համակարգի միջոցով տեղերում ստեղծեց վարչական եւ դատական մարմիններ:

Արցախյան պետության վերածնունդը չանտեսվեց նաեւ Անդրկովկասյան սեյմի կողմից: Սեյմում գտնվող հայ եւ մահմեդական ներկայացուցիչների համաձայնությամբ Լեռնա-յին Ղարաբաղին տրվում է ազատ շրջանի կարգավիճակ:

1918 թ. հունիսի 17-ին Շուշիում հրավիրված միջկուսակցական երկրորդ հավաք-խորհրդակցությունում որոշվեց ստեղծել Նոր մարմին ,Հայ հեղափոխական

կուսակցությունների եւ կազմակերպությունների կոմիսարների խորհուրդէ: Երկրամասը սկզբում բաժանվում էր երկու շրջանի, այսուհետեւ 1918 թ. հուլիսից՝ չորս գավառի: Կոմիսարների խորհրդին կից ստեղծվում է մի մարմին, որը պիտի զբաղվեր երկրամասի ազգային փոքրամասնությունների հարցերով: Կոմիսարների խորհրդի լիազորության տակ էր գտնվում Արաքսի վրայով Պարսկաստանի սահմանը:



Կոմիսարների խորհրդի գործունեությունը իրավական հիմքերի վրա դնելու, ինչպես նաեւ երկրի ներքին եւ արտաքին քաղաքականությանը առնչվող հարցերը լուծելու նպատակով 1918 թ. հուլիսի 22-26-ը Շուշիում իրավիրվեց Ղարաբաղի հայության առաջին համագումարը: Այդ շրջանի տարածքը սկսում է Գանձակի մատույցներից եւ հասնում մինչեւ Արաքսի ափերը¹:

1920 թ. ապրիլին Ադրբեջանում խորհրդային կարգերի հաստատումով ոչ մի փոփոխություն տեղի չունեցավ Լեռնային Ղարաբաղը Ադրբեջանին միացնելու նախկին մուսավաթական քաղաքականության մեջ: Ադրբեջանի հեղկոմի նախագահ Ն. Նարիմանովը, Ստալինի աջակցությամբ ու հովանավորությամբ, պահանջում էր անվերապահորեն Լեռնային Ղարաբաղը, Նախիջեւանը եւ Չանգեզուրը միացնել Ադրբեջանին: Ն. Նարիմանովի զավթողական նման պահանջը, հիմնավորվում էր

¹ - Վահրամ Բալայան, Տարածքային ամբողջականության միջազգային իրավունքի սկզբունքը եւ Ղարաբաղյան հիմնահարցի կարգավորման հեռանկարները, «Լեռնային Ղարաբաղի հանրապետության անցյալը, ներկան եւ ապագան» միջազգային գիտաժողով, Ստեփանակերտ, 2003, էջ 90-91:

դաշնակցական Հայաստանի հետագա ,հզորացումը կանխելու եւ Ադրբեջանում խորհրդային իշխանությունը իբրեւ թե ,դիսկրիմինացիայի չենթարկելու համար:

Նկատենք, որ Հայաստանում խորհրդային կարգերի հաստատվելուց մեկ օր հետո՝ 1920 թ. դեկտեմբերի 1-ին, երբ ,դաշնակցական հզորացմանը նպաստելու պատճառաբանությունը վերացել էր, Բաքվի պրոլետարիատը, հանձնա Ադրբեջանի հեղկոմի, հատուկ ղեկարացիայով ողջունելով Հայաստանում խորհրդային կարգերի հաստատումը, Լեռնային Ղարաբաղը եւ Նախիջեւանը ճանաչեց խորհրդային Հայաստանի բաղկացուցիչ մաս: Ադրբեջանական ԽՍՀ հեղկոմը Լեռնային Ղարաբաղի հայ բնակչության ազատ ինքնորոշման իրավունքը ճանաչել էր նաեւ մինչ այդ՝ 1920 թ. նոյեմբերի 30-ի որոշմամբ:

Հեղկոմի դեկտեմբերի 1-ի ղեկարացիան ողջունեցին Ի. Ստալինը, Ս. Օրջոնիկիձեն, Ս. Կիրովը եւ այնտեղյան ու կուսակցական մի շարք հայ գործիչներ: Ադրբեջանի հեղկոմի ղեկարացիայի հիման վրա եւ ՌԿ(բ)Կ Կովկասյան բյուրոյի 1921 թ. հունիսի 3-ի պլենումի որոշմամբ 1921 թ. հունիսի 19-ին Հայաստանի հեղկոմը, ,խորհրդային Հայաստանե օրաթերթում հրապարակած դեկրետով, ազդարարում էր, ,Ադրբեջանի ԽՍՀ Հեղկոմի հռչակագրի եւ Հայաստանի ու Ադրբեջանի հանրապետությունների կառավարությունների միջեւ եղած համաձայնության հիման վրա հայտարարվում է, որ Լեռնային Ղարաբաղն այժմվակից կազմում է Հայկական ԽՍՀ անբաժան մասը: Լեռնային Ղարաբաղի արտակարգ կոմիսար Նշանակվեց Ասքանազ Մռավյանը: Սակայն Ադրբեջանն արգելակեց այդ որոշման կատարումը²:

Գ. Օրջոնիկիձեն եւ Ս. Կիրովը Ադրբեջանի Հեղկոմի նախագահ Ն. Նարիմանովին խորհուրդ էին տալիս Լեռնային Ղարաբաղի հարցում ղեկավարվել Էթնիկական սկզբունքով, այն է՝ ոչ մի հայկական գյուղ չմիացվի Ադրբեջանին եւ, հակառակը, ոչ մի ադրբեջանական գյուղ չմիացվի Հայաստանին: Ադրբեջանի ղեկավարությունը ճիշտ չէր համարում Էթնիկական սկզբունքով սահմանաբաժանումը: Այնուհետեւ Լեռնային Ղարաբաղի հարցը փոխադրվեց Կովկասյան բյուրոյի պլենում, եւ նրա հուլիսի 3-ի նիստում որոշում ընդունվեց Լեռնային Ղարաբաղը Հայաստանի կազմի մեջ մտցնելու մասին: Վերջապես ընդունվել էր արդարացի եւ օրինական որոշում Լեռնային Ղարաբաղի հարցի մասին, որի բնակչության 95 տոկոսը հայեր էին: Այդ որոշման դեմ բողոքեց Ն. Նարիմանովը, որից հետո հարցի լուծումը

² - Վ. Ե. Խոջաբեկյան, ,Արցախը փորձության ժամին», Երեւան, 1991 թ., էջ 7:

փոխադրվելու էր ՌԿ(Բ)Կ Կենտկոմ (Մոսկվա): Նա սպառնալից պնդում էր, որ հարցը հոգուտ Ադրբեջանի չլուծելու դեպքում հետեւանքների համար Ադրբեջանի հեղկոմը պատասխանատվութլւթլւնն իր վրայից վերցնում է, քանի որ հանրապետությունում ուժեղանում են ,հակախորհրդային խմբերը:

Ն. Նարիմանովի եւ Ստալինի մասնակցությամբ ՌԿ(Բ)Կ Կովկասյան բյուրոյի պլենումը 1921 թ. հուլիսի 4-ին, լսելով խնդրո առարկա հարցը, ձայների մեծամասնությամբ որոշում է Լեռնային Ղարաբաղը վերամիավորել Խորհրդային Չայաստանին: Նարիմանովը բողոքում է նման որոշման դեմ եւ պահանջում, որ հարցը տեղափոխել ՌԿ(Բ)Կ Կովկասյան Կենտկոմ: Եւ թեեւ ՌԿ(Բ)Կ Կովկասյան բյուրոն՝ որոշում է ընդառաջել Նարիմանովի այդ պահանջին, սակայն անսպասելիորեն հաջորդ օրը՝ հուլիսի 5-ին, Նորից գումարում է ՌԿ(Բ)Կ ԿԿ-ի Կովկասյան բյուրոյի նիստը, որի ժամանակ հարցը առանց քննարկելու կամայականորեն որոշվում է Լեռնային Ղարաբաղը միացնել Ադրբեջանին: Դա պատճառաբանվում էր Ադրբեջանի հետ նրա տնտեսական կապերով: Լեռնային Ղարաբաղը դառնալու էր ինքնավար մարզ՝ Շուշի կենտրոնով: Որոշման այսպիսի շրջադարձային փոփոխությունը, ըստ երեւույթին, կապված էր Ի. Ստալինի միջամտության հետ: Այսպիսով, ղարաբաղյան հարցի լուծումը պատճառաբանվեց միայն տնտեսական գործոններով՝ անտեսելով ազգայինը: Միանգամայն պարզ է, որ նիստը գումարվել եւ որոշումը ընդունվել է Ստալին-Նարիմանով գործարքի եւ Ստալինի կողմից գործադրված ճնշման պայմաններում:

Աշխարհի դիվանագիտական պրակտիկայում չկա այնպիսի մի դեպք, երբ սուվերեն հանրապետությունների միջեւ սահմանային հարցերը որոշվեն ո՛չ թե դիվանագիտական ճանապարհներով, այլ կուսակցական որոշումներով: Կուսակցական մարմինը նման որոշում ընդունելու իրավունք չունեթ³:

Չայ ժողովուրդը եւ Չայաստանի ղեկավարությունը բնականաբար խիստ դժգոհ էին որոշումից եւ արտահայտեցին իրենց անհամաձայնությունը, սակայն դրանից ոչինչ չփոխվեց: Չայրենի երկրին միանալու ձգտումով համակված Լեռնային Ղարաբաղի ժողովրդի բողոքի ձայնը չլռեց Նույնիսկ ստալինյան բռնատիրության տարիներին: Մեր օրերում նա ստիպված էր զենքով պաշտպանել իր արդարացի իրավունքները:

Ղարաբաղյան հարցի վերաբերյալ ՌԿ(Բ)Կ Կենտկոմի Կովկասյան բյուրոյի հուլիսի 5-ի անարդարացի եւ ոչ

³ - Վ. Ե. Խոջաբեկյան, ,Արցախը փորձության ժամին», Երեւան, 1991 թ., էջ 8:

օրինակական որոշումը Խորհրդային Հայաստանի իշխանությունները քննադատեցին անմիջապես: Արդեն 1921 թ. հուլիսի 16-ին Հայաստանի Կոմունիստական (Բ) Կուսակցության Կենտկոմը միանգամայն սխալ եւ անբավարար համարեց Կովկասյան բյուրոյի որոշումը: Խիստ քննադատություն հնչեց նաեւ 1922 թ. հունվարի 26-29-ը Երեւանում տեղի ունեցած Հայկոմկուսի առաջին համագումարում: Պատվիրակները ծանր մեղադրանքներ հնչեցրին Կենտկոմի հասցեին, Ղարաբաղի հարցում վճռականություն եւ հաստատականություն չդրսեւորելու համար:

Այնուհանդերձ, Խորհրդային Հայաստանի ղեկավարության հաստատական եւ հետեւողական ջանքերի շնորհիվ երկու տարվա համառ դիմադրությունից հետո Ադրբեջանի իշխանությունները ստիպված էին նահանջել եւ 1923 թ. հուլիսի 7-ի որոշումով Լեռնային Ղարաբաղին տրամադրել ինքնավար մարզի կարգավիճակ: Դրա շնորհիվ էր նաեւ, որ արցախահայությունը Խորհրդային տարիներին միսնաբար դիմակայեց Ադրբեջանի սադրանքներին եւ ազգային խտրականության քաղաքականությանը, Արցախը չհայա-թափվեց⁴: Սակայն այդ որոշմամբ, Արաքսի ափից մինչեւ Փոքր Կովկասի լեռնաշղթայի հյուսիսային փեշերը կտրեցին եւ ստեղծեցին ,Զրդստանի դավառը, դրանով իսկ Արցախը անջատեցին մայր Հայաստանից: Մարզից անջատեցին նաեւ ամբողջ Հյուսիսային Արցախը 107 հայկական գյուղերով: Փաստորեն 11.5 հազար քառ. կմ տարածք ունեցող պատմական Արցախին թողեցին միայն 4.4 հազարը⁵:

Ստալինյան բռնապետության պայմաններում, երբ այլախոհության յուրաքանչյուր դրսեւորում խստորեն պատժվում էր, Խորհրդային Հայաստանի ղեկավարությունը: հատկապես 1936 թ. ԽՍՀՄ նոր Սահմանադրությամբ Անդրֆեդերացիայի լուծարումից հետո, մոռացության չմատնվեց Արցախը Մայր-Հայրենիքի հետ վերամիավորվելու հարցը, սակայն անարդյունք:

Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտից հետո, 1945 թ. գարնանը Խորհրդային Հայաստանի ղեկավարությունը, արձագանքելով Համասփյուռքյան կազմակերպությունների

⁴ - Կարեն Խաչատրյան, Խորհրդային Հայաստանի ղեկավարության քայլերը ԼՂԻՄ-ը ՀՍԽՖՀ-ին վերամիավորելու ուղղությամբ 1945-1975 թթ., ,Լեռնային Ղարաբաղի հանրապետության անցյալը, Ներկան եւ ապագան- միջազգային գիտաժողով, Ստեփանակերտ, 2003, էջ 93:

⁵ - Վահրամ Բալայան, Տարածքային ամբողջականության միջազգային իրավունքի սկզբունքը եւ Ղարաբաղյան հիմնահարցի կարգավորման հեռանկարները, ,Լեռնային Ղարաբաղի հանրապետության անցյալը, Ներկան եւ ապագան- միջազգային գիտաժողով, Ստեփանակերտ, 2003, էջ 91:

կոչերին, ԽՍՀՄ կենտրոնական իշխանությունների առջեւ բարձրացրեց Թուրքիայի կողմից բռնազավթված հայկական տարածքները (Կարս, Արդահան, Սուրմալու) Խորհրդային Չայաստանի հետ վերամիավորվելու խնդիրը: Վերջինիս արդարացի լուծման անհրաժեշտությունը հիմնավորվում էր ոչ միայն պատմական արդարությունը վերականգնելու առումով, այլ՝ նաեւ աշխարհով մեկ սփռված հայության հայրենադարձությունը դեպի Խորհրդային Չայաստան կազմակերպելու համար: Այս կապակցությամբ Չայաստանի ղեկավարությունը չանտեսեց եւ հերթական անգամ բարձրացրեց Լեռնային Ղարաբաղիը Չայաստանի հետ վերամիավորելու հարցը: 1945 թ. նոյեմբերին Չայաստանի Կոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղար Գ. Չարությունյանը ԽՍՀՄ առաջնորդ Ի. Ստալինին ուղղված նամակում իրավացիորեն նշում է, որ դրա անհրաժեշտությունը բխում է ոչ միայն պատմամշակութային, տնտեսական եւ քաղաքական տեսակետից, այլեւ Ղարաբաղի ողջ հայ բնակչության միահամուռ ցանկությունից:

Սակայն պատմական տվյալ ժամանակաշրջանում Թուրքիայի եւ Ադրբեջանի իշխանությունների հակահայկական գործունեությունը կրկին արդյունավետ էր, եւ հայկական տարածքները Չայաստանին վերադարձնելու հարցը դարձյալ չստացավ իր արդարացի լուծումը:

Արցախի խնդիրը հրապարակայնորեն բարձրացնելու համար հերթական նպաստավոր իրավիճակը ստեղծվեց 1960-ական թթ. երբ խորհրդահայությունը զարթոնք էր ապրում: 1960-ական թթ. սկզբներին արցախահայությունը նոր թափով զանգվածային շարժում ծավալեց Արցախը Խորհրդային Չայաստանի հետ վերամիավորելու պահանջով: 1965 թ. Չայաստանում Մեծ Եղեռնի 50-ամյակի կապակցությամբ ԽՍՀՄ պատմության մեջ աննախադեպ բազմահազարանոց հավաքներում առաջ էր քաշում նաեւ Ղարաբաղը ՀՍԽՖՀ-ի կազմում ընդգրկելու պահանջը:

1965-1966 թթ. ինչպես Արցախից, այնպես էլ Երեւանից, հայկական այլ շրջաններից բազմահազար ըստորագրություններով նամակներ ուղղվեցին ԽՍՀՄ Գերագույն խորհուրդ, Նախարարների խորհուրդ. ԽՄԿԿ Կենտկոմ՝ Ղարաբաղյան հարցը հայ ժողովրդի օգտին լուծելու պահանջով: Դրանցից պետք է առանձնացնել Լեռնային Ղարաբաղի ու Խորհրդային Չայաստանի հայ մտավորականների, գիտության եւ մշակույթի գործիչների կողմից 1965 թ. հունիսին եւ 1966 թ. օգոստոսին Մոսկվա ուղղված նամակները: Համաժողովրդական այդ պոռթկումին արձագանքեց նաեւ ՀՍԽՖՀ ղեկավարությունը: ՀԿԿ Կենտկոմի քարտուղար Ա. Զոչինյանի եւ ՀՍԽՖՀ Նախա-րարների խորհրդի նախագահ Բ. Մուրադյանի ստորագրություններով 1966 թ. սեպտեմբերի 30-ին Մոսկվա, ԽՄԿԿ Կենտկոմ ուղղված

ընդարձակ եւ բովանդակայից նամակում Հայաստանի ղեկավարները հենվելով պատմական անժխտելի փաստերի վրա, լավագույնս հիմնավորեցին Լեռնային Ղարաբաղը Խորհրդային Հայաստանի կազմում ընդգրկելու իրենց պահանջը:

Այսպիսով խորուշչովյան ձևալի տարիներին հայ ժողովրդի եւ Խորհրդային Հայաստանի ղեկավարության ձայնը Արցախի խնդրում առավել հաստատական եւ լսելի դարձավ, սակայն խնդիրը դարձյալ մնում էր չկարգավորված:

Ադրբեջանի կենտրոնական իշխանությունների կողմից ԼՂԻՄ-ի նկատմամբ շարունակվող եւ տարեցտարի սաստկացող հակահայկական քաղաքականությունը 1970-ական թթ. ընդվզումներ եւ ազգային ինքնագիտակցության նոր պոռթկումներ առաջացրին ինչպես հայ հասարակության, այնպես էլ Խորհրդային Հայաստանի ղեկավարության մոտ:

1976-1977 թթ. ԽՍՀՄ-ում նոր Սահմանադրության նախագծի համաժողովրդական քննարկումներ ծավալեցին: Խորհրդային Հայաստանի ղեկավարությունը, ամբողջ հայ ժողովուրդը Ղարաբաղի խնդիրը դարձյալ բարձրացրեցին ԽՍՀՄ կենտրոնական իշխանությունների առջև: Դիմումների, հուշագրերի, պահանջագրերի, տեղեկատու եւ այլ փաստաթղթերի հեղեղ տեղաց դեպի Մոսկվա: Վերջինս կարծես ստիպված էր տեղի տալ, ԽՍՀՄ Նախարարների խերիորդի նախագահության 1977 թ. նոյեմբերի 23-ի նիստի արձանագրության մեջ հիմնավորելով հայության պահանջը հետեւյալ արդարացի ձեւակերպումը մտցվեց. «Հարկավոր է Լեռնային Ղարաբաղը (հայերեն՝, Արցախ) միացնել Հայկական ԽՍՀ-ի հետ: Այդ ժամանակ ամեն բան իր օրինական տեղը կընկնի: Սակայն այս անգամ եւս Ադրբեջանի եւ Խորհրդային ազդեցիկ ղեկավար մի շարք գործիչների ջանքերով ԽՄԿԿ Կենտկոմի քաղբյուրոն մերժեց առաջարկությունը եւ հարցը հանեց օրակարգից:

1985 թ. գարնանից ԽՍՀՄ-ում ծավալված վերակառուցման քաղաքականությունը, ժողովրդավարական գործընթացները նոր հույսեր արթնացրին Ղարաբաղյան խնդիրը արդարացի լուծելու համար: Հայաստանում իր համայն հայության համաժողովրդական ազգային-ազատագրական հաղթական պայքարի վճռական փուլը⁶:

⁶-Կարեն Խաչատրյան, Խորհրդային Հայաստանի ղեկավարության քայլերը ԼՂԻՄ-ը ՀՍԽՖՀ-ին վերամիավորելու ուղղությամբ 1945-1975 թթ., Լեռնային Ղարաբաղի հանրապետության անցյալը, ներկան եւ ապագան- միջազգային գիտաժողով, Ստեփանակերտ, 2003, էջ 93-96:

Վերակառուցումը եւ դարաբաղյան շարժումը Վերափոխումների քաղաքականությունը

1985 թ. մարտին փոխվեց ԽՍՀՄ ղեկավարությունը: Լճացման տարիների ղեկավարությանը փոխարինելու եկան ավելի երիտասարդ գործիչներ: ԽՄԿԿ Կենտկոմի գլխավոր քարտուղար ընտրվեց Միխայիլ Գորբաչովը, որը հետագայում դարձավ ԽՍՀՄ նախագահ:

Երկիրը կանգնած էր արմատական փոփոխություններ կատարելու անհրաժեշտության առաջ: Գորբաչովը հայտարարեց, որ ԽՍՀՄ-ը ճգնաժամից դուրս բերելու համար պետք է իրականացվեն վերափոխումներ:

Վերակառուցման սկզբնական շրջանում շեշտը դրվեց աշխատանքային կարգապահության բարձրացման, գիտատեխնիկական առաջընթացն ու երկրի սոցիալ-տնտեսական զարգացումն արագացնելու, քաղաքական բարենորոգումների վրա: Բայց այս ուղղություններով ձեռնարկված միջոցառումները ձախողվեցին:

Վերակառուցման ընթացքում իրականացվող բարենորոգումների անկատարությունը, ոչ արմատական ձեռնարկումները հանգեցրին ճգնաժամային վիճակը խորացնող բարդ ու հակասական գործընթացների: Սոցիալ-տնտեսական ոլորտում ճգնաժամն ավելի խորացավ:

Սոցիալիստական հասարակարգի խոր ճգնաժամը, կուսակցական-պետական գաղափարախոսության մնանկությունը, չլուծված բազմաթիվ հարցեր եւ առավելապես ազգային խնդիրը շարժման մեջ դրեցին Խորհրդային Միության միլիոնավոր քաղաքացիների, տարբեր ժողովուրդների ու ազգերի:

Եղած ընդհանուր դժվարություններին Չայաստանում գումարվեցին նաեւ Լեռնային Ղարաբաղի խնդիրը, շրջափակումը, 1988 թ. ավերիչ երկրաշարժի հետեւանքները, բնապահպանության սրված հիմնախնդիրները: Այս ամենը Չայաստանի առանց այն էլ դժվարին սոցիալ-տնտեսական կացությունը դարձրին աղետալի⁷:

Այսպես կոչված ,վերակառուցմանե գործընթացը մահացու հարված հասցրեց Չայ ժողովրդի 70 ամյա քաղաքական-տնտեսական-մշակութային ձեռքբերումներին, որի հետեւանով ժողովուրդը անցավ նախնադարյան շրջանի պայմաններին⁸:

⁷ - Չայոց Պատմություն, Երեւան, 1994, էջ 381-382.

⁸ - Նույն տեղում, էջ 384-387: Վ. Ե. Խոջաբեկյան, Նշվ. աշխ. էջ 225-254.

Ղարաբաղյան ազատագրական շարժումը

Խորհրդային Միությունում ազատագրական շարժումների ծավալումը վերակառուցման քաղաքականության անմիջական հետեւանք էր: Իր ազգային արժանա-պատվությունը պաշտպանելու համար առաջինը հանդես եկավ արցախահայությունը: Վերջինս ամենեւին չէր հաշտվել պատմական իր տարածքները Ադրբեջանին բռնակցելու եւ Ադրբեջանի իշխանությունների կողմից իրականացվող հակահայկական քաղաքականության հետ:

Արցախահայությունը, հավատալով կուսակցության հռչակած վերակառուցման նոր քաղաքականությանը, պայքար սկսեց սահմանադրական ճանապարհով մայր հայրենիքի՝ Հայաստանի հետ վերամիավորվելու համար:

1988 թ. փետրվարի 20-ին Լեռնային Ղարաբաղի հիքնավար Մարզի մարզխորհրդի 20-րդ գումարման նստաշրջանը, երկրի Սահմանադրությանը համապատասխան, որոշում ընդունեց: Մարզխորհուրդը դիմեց Ադրբեջանական ԽՍՀ, Հայկական ԽՍՀ եւ ԽՍՀՄ Գերագույն խորհուրդներին՝ մարզը Ադրբեջանի կազմից դուրս բերելու եւ Հայաստանի կազմի մեջ ընդգրկելու մասին:

Հայաստանում եւ սփյուռքում արցախահայության հետ համերաշխության զանգվածային ցույցերի մեծ ալիք սկսվեց: Մայրաքաղաքում եւ հանրապետության բազմաթիվ քաղաքներում, Ղարաբաղում սկսեցին կազմակերպվել բազմահազարանոց հանրահավաքներ: Սակայն ԽՍՀՄ քաղաքական ղեկավարությունը հենց սկզբից Ղարաբաղյան շարժման նկատմամբ բացասական դիրք գրավեց: Նա Արցախում եւ Հայաստանում ընթացող այդ հանրահավաքները որակեց որպես սադրիչ, ծայրահեղական, մի խումբ ազգայնականների պահանջ:

Ղարաբաղյան շարժման հենց առաջին օրից հանրապետության ղեկավարությունը սպասողական դիրք գրավեց եւ չկարողացավ ներագդել իրադարձությունների ընթացքի վրա: 1988թ. փետրվարին ստեղծվեց կազմկոմիտե, որը կազմակերպում եւ ղեկավարում էր բազմահազարանոց ցույցերն ու հանրահավաքները:

Հանրահավաքներին մասնակցում եւ ելույթներ էին ունենում հայ ականավոր գիտնականներ, մշակույթի եւ արվեստի գործիչներ, աշխարհահռչակ գիտնական Վիկտոր Համբարձումյանը, բանաստեղծուհի Սիլվա Կապուտիկյանը,

ամսին ստեղծվեց ,Ղարաբաղե կոմիտեն, որն իր մասնաճյուղերը ստեղծեց հանրապետության շրջաններում:

Հայաստանում եւ Արցախում ծավալվող իրադարձություններին հետեւում եւ իրենց բարոյական աջակցությունն էին ցուցաբերում ԽՍՀՄ տարբեր ժողովուրդների ճանաչված գործիչներ⁹:

Արցախը պատմության ընթացքում

Արցախը (Ղարաբաղը) պատմական Հայաստանի անբաժանելի մասն է: Ուրարտական ժամանակաշրջանում (մ.թ.ա. 9-6դդ.) Արցախը հայտնի էր Ուրտեխե-Ուրտեխիսի անվանվամբ: Արցախի՝ որպես Հայաստանի մաս, հիշատակումներ կան Ստրաբոնի, Պլինիոս Ավագի, Կլավդիոս Պտղոմեասի, Պլուտարքոսի, Դիոն Կասիոսի եւ այլ անտիկ հեղինակների աշխատություններում: Դրա վառ վկայությունն է նաեւ պահպանված պատմամշակութային հարուստ ժառանգությունը:

Մեծ Հայքի թագավորության բաժանումից հետո (387թ.) Արցախը կազմում է Արեւելահայկական թագավորության մաս, որն էլ շուտով ընկնում է Պարսկաստանի տիրապետության տակ: Այդ շրջանում Արցախը Հայկական մարզպանության, այնուհետեւ՝ արաբական տիրապետության ժամանակաշրջանում Արմենիա կուսակալության մաս էր կազմում: Արցախը մաս է կազմել Հայկական Բագրատունյաց թագավորության (9-11դդ.), ապա Չաքարյանների հայկական իշխանության (12-13դդ.):

Հաջորդած դարերում Արցախը հայտնվել է այլեւայլ նվաճողների վերահսկողության ներքո՝ մնալով հայկական եւ ունենալով կիսաանկախ կարգավիճակ: XVIII դարի կեսերից սկսվում է թուրք քոչվոր ցեղախմբերի ներթափանցումը Արցախի հյուսիս, ինչը հանգեցնում է ընդհարումների տեղաբնիկ հայերի հետ: Այդ ժամանակաշրջանում հիշարժան են որոշակի ինքնիշխանության հասած հինգ (Խամսայի) հայկական մելիքությունները, որոնք իրենց ծաղկման եւ հզորության գագաթին հասան XVIII դարի ավարտին: 1804-1813 թթ. ռուս-պարսկական պատերազմի ավարտին՝ 1813 թ. Գյուլիստանի հաշտության պայմանագրով Արցախ-Ղարաբաղն անցնում է Ռուսաստանի տիրապետության տակ:

⁹ - Հայոց Պատմություն, Երեւան, 1994, էջ 384-387:

Վ. Ե. Խոջաբեկյան, Նշվ. աշխ. էջ 225-254:

Էդ. Բաղդասարյան, Արցախի պատմություն, Թեհրան 2002:

ԼՂՀ անցյալը, Ներկան եւ ապագան, Ստեփանակերտ, 2006:

Մինչխորհրդային ժամանակաշրջան

Լեռնային Ղարաբաղի հիմնախնդիրը ծագել է 1917թ. Ռուսաստանյան կայսրության փլուզման արդյունքում Անդրկովկասում երեք ազգային պետությունների՝ Հայաստանի, Ադրբեջանի եւ Վրաստանի հանրապետությունների կազմավորման շրջանում: Լեռնային Ղարաբաղը բնակչությունը, որի 95 տոկոսը հայեր էին, գումարեցին իրենց առաջին համագումարը, որը Լեռնային Ղարաբաղը հռչակեց անկախ վարչաքաղաքական միավոր, ընտրեց Ազգային խորհուրդ եւ կառավարություն: 1918-1920թթ. Լեռնային Ղարաբաղն ուներ պետականության բոլոր ատրիբուտները՝ ներառյալ բանակն ու օրինական իշխանությունները:

Լեռնային Ղարաբաղի ժողովրդի խաղաղ նախաձեռնություններին ի պատասխան Ադրբեջանի ժողովրդավարական Հանրապետությունը դիմեց ռազմական գործողությունների: 1918 թ. մայիսից մինչեւ 1920թ. ապրիլը Ադրբեջանի եւ Նրան սատարող Թուրքիայի զինված ստորաբաժանումները հայ ազգաբնակչության հանդեպ իրագործեցին բռնություններ եւ ջարդեր (1920թ. մարտին միայն Շուշիում կոտորվեց եւ տեղահանվեց շուրջ 40 հազար հայ): Սակայն, դրանով հնարավոր չեղավ պարտադրել Լեռնային Ղարաբաղի ժողովրդին ընդունելու Ադրբեջանի իշխանությունը:

1919 թ. օգոստոսին Ղարաբաղը եւ Ադրբեջանը՝ ռազմական բախումը կանխելու նպատակով կնքեցին նախնական պայմանագիր, որով համաձայնվեցին երկրամասի կարգավիճակի խնդիրը քննարկել Փարիզի խաղաղության խորհրդաժողովում:

Հիշարժան է միջազգային հանրության արձագանքը: Ազգերի լիգան մերժել է Ադրբեջանի անդամության դիմումն այն պատճառաբանությամբ, որ դժվար է որոշել պետության հստակ սահմանները եւ այն տարածքները, որոնք գտնվում են այդ պետության ինքնիշխանության ներքո: Ի թիվս այլ վիճելի խնդիրների եղել է նաեւ Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի հարցը: Տարածաշրջանի խորհրդայնացման հետեւանքով հիմնախնդիրը դուրս մնաց միջազգային կառույցների օրակարգից:

Լեռնային Ղարաբաղը խորհրդային տարիներին (1920-1990)

Անդրկովկասում խորհրդային կարգերի հաստատումն ուղեկցվեց քաղաքական նոր կարգերի ստեղծմամբ: Լեռնային Ղարաբաղը որպես Ադրբեջանի եւ Հայաստանի միջեւ վիճելի տարածք է ճանաչվում նաեւ խորհրդային Ռուսաստանի կողմից: 1920թ. օգոստոսին խորհրդային Ռուսաստանի եւ Հայաստանի Հանրապետության միջեւ կնքված համաձայնագրով, ռուսական զորքերը ժամանակավորապես տեղակայվեցին Լեռնային Ղարաբաղում:

Հայաստանում խորհրդային կարգերի հաստատումից անմիջապես հետո, 1920 թ. նոյեմբերի 30-ին, Ադրբեջանի Հեղկոմը (Հեղափոխական կոմիտե, այն ժամանակվա բոլշևիկյան իշխանության գլխավոր մարմին) իր հայտարարությամբ Ադրբեջանի կողմից Նախկինում հավակնած տարածքները՝ Լեռնային Ղարաբաղը, Չանգեզուրը եւ Նախիջեւանը, ճանաչեց որպես Հայաստանի անբաժանելի մաս:

Ադրբեջանական ԽՍՀ Ազգային խորհուրդը՝ հիմք ընդունելով Ադրբեջանի Հեղկոմի եւ Ադրբեջանական ԽՍՀ եւ Հայկական ԽՍՀ կառավարությունների միջեւ կնքված համաձայնագիրը, 1921թ. հունիսի 12-ի հռչակագրով Լեռնային Ղարաբաղը հռչակում է Հայկական ԽՍՀ անբաժանանելի մաս:

Լեռնային Ղարաբաղի, Չանգեզուրի եւ Նախիջեւանի նկատմամբ հավակնու-թյուններից հրաժարվելու մասին խորհրդային Ադրբեջանի հայտարարության եւ Հայաստանի ու Ադրբեջանի կառավարությունների միջեւ համաձայնության հիման վրա՝ 1921 թ. հունիսին, Հայաստանը նույնպես Լեռնային Ղարաբաղը հայտարարեց իր անբաժանելի մաս:

Հայաստանի կառավարության ընդունած դեկրետի տեքստը հրապարակվեց ինչպես Հայաստանի, այնպես էլ Ադրբեջանի մամուլում (Բաքվի աշխատավորե, Ադրբեջանի Կոմկուսի Կենտկոմի օրգան, 1921թ. հունիսի 22): Այսպիսով տեղի ունեցավ Լեռնային Ղարաբաղի Հայաստանին միացման իրավական ամրագրումը: Միջազգային իրավունքի եւ նորմերի համատեքստում (միջազգային իրավական իմաստով), կոմունիստական վարչակարգի ընթացքում սա եղավ վերջին օրինական ակտը Լեռնային Ղարաբաղի վերաբերյալ:

Անտեսելով իրողությունը, 1921թ. հուլիսի 4-ին Ռուսաստանի կոմունիստական կուսակցության Կովկասյան բյուրոն Վրաստանի մայրաքաղաք Թբիլիսիում հրավիրում է լիազումար նիստ, որի ընթացքում նույնպես հաստատվում է Լեռնային Ղարաբաղը Հայկական ԽՍՀ մաս հանդիսանալու փաստը: Սակայն, Մոսկվայի թելադրանքով եւ Ստալինի

անմիջական միջամտությամբ, հուլիսի լույս 5-ի գիշերը վերանայվում է նախորդ օրվա որոշումը եւ ընդունվում է Լեռնային Ղարաբաղը խորհրդային Ադրբեջանի կազմում ընդգրկելու եւ այդ տարածքում ինքնավար մարզ կազմավորելու վերաբերյալ պարտադրված որոշումը՝ չպահպանելով նույնիսկ ընթացակարգը: Այս որոշումն աննախադեպ իրավական ակտ է միջազգային իրավունքի պատմության մեջ, երբ երրորդ երկրի կուսակցական մարմինը (ՌԿ(Բ)Կ)՝ առանց որեւէ իրավական հիմքի կամ իրավասության, որոշում է Լեռնային Ղարաբաղի կարգավիճակը:

Ադրբեջանական եւ Հայաստանի ԽՍՀ-ները 1922թ. դեկտեմբերին ընդգրկվեցին ԽՍՀՄ-ի կազմավորման գործընթացներում, իսկ Ղարաբաղի տարածքի ընդամենը մի հատվածում 1923թ. հուլիսի 7-ին, Ադրբեջանական ԽՍՀ Կենտրոնական գործադիր հեղափոխական կոմիտեի որոշմամբ կազմավորվեց Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը՝ Ադրբեջանական ԽՍՀ կազմում, որով, ըստ էության, ոչ թե լուծվեց, այլ ժամանակավորապես սառեցվեց դարաբաղյան հիմնախնդիրը: Ավելին, ամեն ինչ արվեց, որպեսզի Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզն ընդհանուր սահման չունենա Հայաստանի հետ:

Սակայն ողջ խորհրդային ժամանակահատվածում Լեռնային Ղարաբաղի հայությունը երբեք չհաշտվեց այդ որոշման հետ եւ տասնյակ տարիներ շարունակաբար պայքարեց Մայր հայրենիքին վերամիավորվելու համար:

Ադրբեջանական ԽՍՀ կազմում Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի լինելու ամբողջ ժամանակահատվածում այդ հանրապետության ղեկավարությունը կանոնավոր եւ հետևողականորեն ոտնահարել է հայ բնակչության իրավունքներն ու շահերը: Լեռնային Ղարաբաղի նկատմամբ Ադրբեջանի կողմից վարվող խտրական քաղաքականությունը դրսևորվում էր մարզի սոցիալ-տնտեսական զարգացման արհեստական կասեցման, այն Ադրբեջանի հումքային ածանցյալի վերածելու, ԼՂԻՄ-ի հայաթափման նպատակով ժողովրդագրական գործընթացին ակտիվ միջամտության, հայկական կոթողների եւ մշակութային արժեքների ոչնչացման ու յուրացման փորձերի մեջ:

Լեռնային Ղարաբաղի նկատմամբ Ադրբեջանի խտրականությունն իր ազդեցությունն ունեցավ նաեւ Ղարաբաղի բնակչության վրա եւ դարձավ վերջինիս գաղթի հիմնական պատճառը: Արդյունքում, Ղարաբաղի բնակչության հարաբերակցությունը փոփոխվեց. եթե 1923 թվականին հայերը կազմել են Լեռնային Ղարաբաղի բնակչության 94,4 տոկոսը, ապա 1989թ. տվյալներով հայերի թիվը նվազել է մինչեւ 76,9

տոկոս: Հայաթափման քաղաքականությունն առավել հաջող ընթացքով մեկ այլ հայկական տարածքում՝ Նախիջեւանում:

ԼՂԻՄ-ի ժողովուրդը եւ Հայկական ԽՍՀ իշխանությունները Ղարաբաղն Ադրբեջանական ԽՍՀ-ին փոխանցելու որոշումը վերանայելու խնդրանքով ԽՍՀՄ կենտրոնական իշխանություններին ուղղված բազմաթիվ դիմումներ են հղել, որոնք անտեսվել են կամ մերժվել, պատճառ դառնալով՝ նախաձեռնողների հանդեպ կիրառվող հալածանքների: Նշված դիմումների թվում են Հայկական ԽՍՀ Կառավարության եւ կոմունիստական կուսակցության կենտրոնական կոմիտեի 1945թ. դիմումը ԽՍՀՄ կառավարությանը եւ Համամիութենական կոմունիստական կուսակցության կենտրոնական կոմիտեին, 1963թ. ԼՂԻՄ ազգաբնակչության ավելի քան 2,5 հազար, իսկ 1965թ. ավելի քան 45 հազար ստորագրությամբ նամակները՝ հասցեագրված ԽՍՀՄ ղեկավարությանը, 1977թ. ԽՍՀՄ նոր Սահմանադրության համաժողովրդական քննարկումների շրջանակում ԼՂԻՄ աշխատանքային կոլեկտիվների առաջարկու-թյունները:

Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի Ներկա փուլը

Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի ներկա փուլը սկսվել է 1988 թ., երբ ի պատասխան ԼՂ բնակչության ինքնորոշման պահանջի, ադրբեջանական իշխանությունները կազմակերպեցին հայ բնակչության կոտորածներ ու էթնիկ զտումներ Ադրբեջանի ողջ տարածքում, մասնավորապես՝ Սումգայիթում, Բաքվում եւ Կիրովաբադում:

1991թ. դեկտեմբերի 10-ին, ԼՂ-ի բնակչությունը հանրաքվեով ամրագրեց անկախ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հռչակումը, որը լիովին համապատասխանում է ինչպես միջազգային իրավունքի նորմերին, այնպես էլ այն ժամանակվա ԽՍՀՄ օրենքների տառին եւ ոգուն: Այսպիսով, նախկին Ադրբեջանական ԽՍՀ տարածքում ձեւավորվեցին երկու իրավահավասար պետական կազմավորումներ՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը եւ Ադրբեջանի Հանրապետությունը:

Լեռնային Ղարաբաղում եւ հարակից հայաբնակ տարածքներում ադրբեջանական իշխանությունների վարած էթնիկ զտումների քաղաքականությունը վերաճեց Լեռնային Ղարաբաղի դեմ Ադրբեջանի կողմից բացահայտ ագրեսիայի եւ լայնածավալ ռազմական գործողությունների, ինչը հանգեցրեց

տասնյակ հազարավոր զոհերի եւ զգալի նյութական կորուստների:

Ադրբեջանը ոչ մի անգամ չանսաց միջազգային հանրության, մասնավորապես Լեռնային Ղարաբաղի հակամարտությանն առնչվող ՄԱԿ ԱԽ բանաձեւերում ամրագրված կոչերին՝ դադարեցնել ռազմական գործողությունները եւ վարել խաղաղ բանակցություններ:

Պատերազմի արդյունքում Ադրբեջանը զավթեց Լեռնային Ղարաբաղի Շահումյանի շրջանն ամբողջությամբ եւ Մարտունի ու Մարտակերտի շրջանների արեւելյան հատվածները: Լեռնային Ղարաբաղի զինված ուժերի վերահսկողության տակ անցան հարակից շրջաններ, որոնք անվտանգության բուֆերի դեր կատարեցին՝ արգելափակելով ադրբեջանական կողմից ԼՂ բնակավայրերի հետագա հրետակոծումը:

1994 թ. մայիսին Ադրբեջանը, Լեռնային Ղարաբաղը եւ Հայաստանը կնքեցին զինադադար, որը՝ չնայած խախտումներին, ուժի մեջ է ցայսօր:

Հիմնախնդրի կարգավորման շուրջ բանակցություններն ընթանում են ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների (Ռուսաստան, ԱՄՆ, Ֆրանսիա) միջնորդությամբ: Վերջին տասնամյակում հիմնախնդրի կարգավորման համանախագահների առաջարկած մի քանի տարբերակներ մերժվել են Ադրբեջանի կողմից. վերջինը 2001 թվականի ,Փարիզյան սկզբունքներն էին, որոնք ամփոփվել էին կողմերին ներկայացված Զի Վեստի փաստաթղթում:

Ներկայումս բանակցություններն ընթանում են 2007թ. նոյեմբերին համանախագահների կողմից ներկայացված մադրիդյան առաջարկությունների հիման վրա:

Չնայած ԵԱՀԿ Մինսկի խմբի շրջանակներում հակամարտության կարգավորման միջազգայնորեն ընդունված միակ ձեւաչափով տարվող բանակցություններին եւ դրանք Մինսկի գործընթացի շրջանակներում ընթանալու պայմանավորվածություններին, Ադրբեջանը՝ խեղաթյուրելով հակամարտության էությունն ու հետեւանքների բուն պատճառները, նաեւ փորձեր է ձեռնարկում հակամարտության կարգավորման մեջ ներքաշելու այլ միջազգային կազմակերպությունների եւ բանակցային գործընթացը խոչընդոտող եւ քարոզչական նպատակներ հետապնդող զուգահեռ գործ-ընթացներ է նախաձեռնում մասնավորապես ՄԱԿ ԳԱ-ում եւ Եվրոպայի խորհրդում:

Ադրբեջանի վարած ռազմատենչ ագրեսիվ քարոզչությունը եւս կասկածի տակ է դնում փոխզիջումային կարգավորման հասնելու Ադրբեջանի ցանկությունը, հայտարարությունները,

ստանձնած հանձնառություններն ու դրանց լրջությունը: Ադրբեջանը Նավթային եկամուտներից ստացված գումարները շարունակում է ուղղել ռազմական բյուջեի ավելացմանը եւ մեծ քանակությամբ հարձակողական սպառնալիությունների ձեռքբերմանը՝ կոպտորեն ոտնահարելով անվտանգության եւ ռազմաքաղաքական ոլորտի մի շարք համաձայնագրեր եւ պարտավորություններ: Ըստ Էոլթյան, Ադրբեջանը տապալում է նաեւ կողմերի միջեւ վստահության ամրապնդմանն ուղղված տնտեսական, քաղաքական, ռազմական եւ հումանիտար բնույթի բոլոր նախաձեռնությունները: Մասնավորապես Ադրբեջանը մերժում է տարածաշրջանային համագործակցություն ծավալելու հայկական կողմի եւ շփման գծից դիպուկահարների հետքաշման Մինսկի խմբի համանախագահների կատարած առաջարկությունները:

Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի առնչությամբ Հայաստանի դիրքորոշումը

Հայաստանը համոզված է, որ կարգավորման գործընթացի արդյունավետության բարձրացումն անհնար է առանց բանակցություններին հակամարտության կողմ հանդիսացող Լեռնային Ղարաբաղի լիիրավ մասնակցության: Հայաստանը գտնում է, որ հակամարտության կարգավորումը պետք է հիմնված լինի հետեւյալ սկզբունքների վրա.

-Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման հիմք պետք է հանդիսանա Լեռնային Ղարաբաղի ժողովրդի ինքնորոշման իրավունքի իրականացման ճանաչումը,

-Լեռնային Ղարաբաղը Հայաստանի հետ պետք է ունենա հայկական կողմի իրավագործության տակ գտվող անխափան ցամաքային կապ,

-Լեռնային Ղարաբաղի անվտանգությունը պետք է միջազգայնորեն երաշխավորված լինի:

Այս սկզբունքների ընդունումն ու պայմանագրային ամրագրումը հնարավորություն կընձեռի հասնել հիմնախնդրի համալիր կարգավորմանը:

Հայաստանը կարեւորում է Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման գործընթացում ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների միջնորդությունը՝ որպես բանակցային գործընթացի գործունե ձեւաչափ, որը կարգավորման ուղիներ գտնելու բավականաչափ ներուժ ունի:

Հայաստանը հետամուտ է խնդրի կարգավորմանը միայն խաղաղ ճանապարհով: Ադրբեջանի փորձերը ուժի սպառնալիքով կորզելու միակողմանի զիջումներ ոչ միայն ի

սկզբանե դատապարտված են ծախողման, այլև շարունակում են մնալ փոխզիջումային տարբերակով խնդրի կարգավորման հիմնական խոչընդոտը:

Լեռնային Ղարաբաղի ապագա չունի Ադրբեջանի կազմում, եւ, ինչպիսին էլ լինի լուծումը, այն պետք է բխի հենց Ղարաբաղի ժողովրդի կամքից: Դա է ժողովուրդների ինքնորոշման իրավունքի առանցքը: Ադրբեջանը չունի Լեռնային Ղարաբաղի նկատմամբ հավակնությունների ո՛չ իրավական, ո՛չ քաղաքական եւ ո՛չ էլ բարոյական հիմքեր¹⁰:

Ազատագրական շարժման վերելքը

Անգամ Սումգայիթում տեղի ունեցած վայրագություններից հետո Կենտրոնը ղարաբաղյան հիմնահարցը ներկայացնում էր ոչ թե քաղաքական, այլ զուտ սոցիալ-տնտեսական բնույթ ունեցող խնդիր: Ահա թե ինչու 1988թ. մարտի 24-ին ԽՍՀՄ Կենտկոմի եւ Մինիստրների խորհրդի որոշմամբ ԼՂԻՄ-ին տրամադրվեց 400 մլն ռուբլի գումար՝ մարզում կուտակված սոցիալ-տնտեսական եւ մշակութային հիմնահարցերը լուծելու համար: Ադրբեջանի ղեկավարությունը այդ գումարը օգտագործեց մարզի ադրբեջանական բնակավայրերում շինարարական աշխատանքներ իրականացնելու համար:

Գնալով շարժումը մեծ ծավալներ էր ընդունում: Հանրահավաքներին ու ցույցերին զուգընթաց՝ հանրապետությունում եւ Արցախում սկսվեցին զանգվածային գործադուլներ: Հայ ժողովուրդը ԽՍՀՄ կառավարությունից պահանջում էր արդարացի լուծել Ղարաբաղի հիմնահարցը, տալ սումգայիթյան եղեռնագործության քաղաքական գնահատականը, Հայաստանի իշխանություններից պահանջում էր ընդառաջ գնալ ԼՂԻՄ-ի մարզխորհրդի փետրվարի 20-ի որոշմանը:

1988թ. հունիսի 15-ին ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նստաշրջանը համաձայնություն տվեց մարզը Հայաստանի կազմի մեջ մտցնելուն եւ հարցը դրականորեն լուծելու խնդրանքով դիմեց ԽՍՀՄ Գերագույն խորհրդին: Վերջինիս նախագահության նիստին մասնակցում էին Հայաստանի, ԼՂԻՄ-ի, Ադրբեջանի ներկայացուցիչները: Այստեղ հայ ժողովրդի ներկայացուցիչներ, ակադեմիկոսներ Վ. Համբար-ձումյանը, Ս. Համբարձումյանը, գրող Վ. Պետրոսյանը, Հ. Պողոսյանը եւ ուրիշներ իրենց ելույթներում դատապարտեցին սումգայիթյան ոճրագործությունը եւ առաջ քաշեցին Արցախը Հայաստանի

¹⁰ - <http://www.ufa.am/hy/արտսահ/#a3>

հետ վերամիավորելու անհրաժեշտությունը: Սակայն ԽՍՀՄ բարձրագույն իշխանությունը հուլիսի 18-ի նիստում մերժեց ԼՂԻՄ մարզխորհրդի եւ Հայաստանի Գերագույն խորհրդի նստաշրջանների ընդունած որոշումները:

1988թ. մայիսին Երեւանում ստեղծվեց, Ղարաբաղյան շարժման Հայաստանի կոմիտե, որի կազմում էին Վազգեն Մանուկյանը, Լ Եւոն Տեր-Պետրոսյանը, Բաբկեն Արարքցյանը եւ ուրիշներ: Կոմիտեն իր ձեռքը վերցրեց շարժման կազմակերպումը եւ ղեկավարումը:

Շարժումը ղեկավարելու համար Արցախում ստեղծվեց ,Կռուկե կոմիտեն:

1988թ. օգոստոսին հանրապետության Գերագույն խորհրդի մասնակի ընտրությունների արդյունքում Ղարաբաղյան շարժման մի շարք ղեկավարներ՝ Աշոտ Մանուկյանը, Լ Եւոն Տեր-Պետրոսյանը, Վազգեն Մանուկյանը, Ռաֆայել Ղազարյանը, Ռոբերտ Զոչարյանը եւ ուրիշներ դարձան պատգամավորներ: Նորընտիր պատգամավորները նկատելի ազդեցություն ունեցան Հայաստանի Գերագույն խորհրդի հետագա գործունեության վրա:

1988 թ. նոյեմբերի 24-ին Հայաստանի Գերագույն խորհուրդը որոշում ընդունեց այն մասին, որ միութենական իշխանությունների որոշումները հանրապետությունում կգործեն միայն այն դեպքում, երբ դրանք հավանության կարժանանան Հայաստանի բարձրագույն օրենսդիր մարմնի կողմից:

Կենտրոնը մերժեց այդ որոշումը եւ Երեւանում մտցրեց հատուկ դրություն ու պարետային ժամ: Արգելվեց հանրահավաքների եւ ցույցերի կազմակերպումը:

Արցախյան շարժման ընթացում հայ ժողովուրդը կորցրեց կոմունիստական կուսակցության հանդեպ ունեցած հավատը, իսկ ԽՍՀՄ-ում տեղի ունեցող ազգային խմորումները մոտեցնում էին այդ պետության վախճանը:

Հանրապետություններում ազգային շարժումները ղեկավարում էին ժողովրդի վստահությունը վայելող կազմակերպությունները:

Հայաստանում ազգային շարժման ղեկավարությունը ստանձնեց Ղարաբաղյան շարժման Հայաստանի կոմիտեի հիմքի վրա 1989 թ. Նոյեմբերին առաջացած ,Հայոց համազգային շարժում (ՀՀՇ) կազմակերպությունը¹¹:

¹¹ - Հայոց Պատմություն, Երեւան, 1994, էջ 388-390:

Վ. Ե. Խոջաբեկյան, Նշվ. աշխ. էջ 225-254:

Էդ. Բաղդասարյան, Արցախի պատմություն, Թեհրան 2002:

ԼՂՀ անցյալը, Ներկան եւ ապագան, Ստեփանակերտ, 2006:

Հայերի բռնագաղթեցումը Ադրբեջանից

Ղարաբաղյան շարժման առաջին օրերից Ադրբեջանի տարածքում բնակվող հայությունը սկսեց ենթակվել մշտական հարձակումների ու թալանի: 1988թ. գարնանից սկսած Կիրովաբադից, Շամխորից, Խանլարից, Դաշքեսանից, Շաքիից եւ հայաշատ այլ բնակավայրերից հայ ազգաբնակչությունը թալանի ու բռնությունների ենթարկվելով գնազվածաբար արտաքսվեց:

Առավել ուժեղ ճնշումների ենթարկվեց Կիրովաբադի հայությունը: Երկու շաբաթ շարունակ հայկական եկեղեցում հավաքված հայերը դիմադրություն ցույց տվեցին ադրբեջանական ամբոխին: Զաղաք մտցվեցին զինվորական ստորաբաժանումներ, որոնք նույնպես հարձակման ենթարկվելով՝ ունեցան սպանվածներ եւ վիրավորներ:

Բռնագաղթվածների մեծ մասը չկարողացավ իր հետ դուրս բերել ունեցվածքը, եւ այն թալանվեց ադրբեջանցիների կողմից: Միայն 1988թ. մարտից մինչ եւ դեկտեմբեր Ադրբեջանից բռնագաղթվել են շուրջ 200 հազար հայեր:

Բռնագաղթի հաջորդ խոշոր ալիքը սկսվեց 1990թ. հունվարին, երբ մեկ շաբաթվա ընթացքում Բաքվում սպանվեցին 100-ից ավելի հայեր, իսկ շուրջ 200 հազարը ստիպված հեռացան քաղաքից:

1988 թ. աշնանը կազմակերպվեց Հայաստանից ադրբեջանցիների արտագաղթը: Ընդ որում, եթե Ադրբեջանից գաղթող հայերը թալանվեցին ու հալածվեցին, ապա Հայաստանից գաղթող ադրբեջանցիների համար ընդունելի պայմաններ ստեղծվեցին: Իրենց ունեցվածքը տեղափոխելու համար նրանց տրամադրվեց տրանսպորտ, հնարավորություն ընձեռվեց տները վաճառելու եւ այլնի համար:

Հայաստանում ստեղծված ծանր իրավիճակն ավելի վատթարացավ հայ ժողովրդի գլխին պայթած ծանր աղետի՝ երկրաշարժի հետեւանքով¹²:

¹² - Հայոց Պատմություն, Երեւան, 1994, էջ 391:

Վ. Ե. Խոջաբեկյան, Աշխ. էջ 225-254:

Էդ. Բաղդասարյան, Արցախի պատմություն, Թեհրան 2002:

ԼՂՀ անցյալը, Ներկան եւ ապագան, Ստեփանակերտ, 2006:

TURKEY AND THE ARMENIAN ATROCITIES A REIGN OF TERROR.

**FROM TARTAR HUTS TO CONSTANTINOPLE PALACES.
CENTURIES OF OPPRESSION — MOSLEM AND CHRISTIAN —
SULTAN AND PATRIARCH — BROKEN PLEDGES FOLLOWED
BY MASSACRE AND OUTRAGE.
THE RED CROSS TO THE RESCUE.**

BY THE
REV. EDWIN MUNSELL BLISS,

Late of Constantinople,
Editor of *ENCYCLOPEDIA OF MISSIONS*; Assistant Editor
of *THE INDEPENDENT*,

ASSISTED BY

The REV. CYRUS HAMLIN, D. D., Founder of Robert
College; PROF. E. A. GROSVENOR, of Amherst College;
REV. BENJAMIN LABAREH, D. D., late of Persia, and Other
Eminent Oriental Scholars; also Several Eye-Witnesses of
the Massacres.

CHAPTER XXVI.

RELIGIOUS PERSECUTION.

**Motive of the Massacres — Primarily Political, then Religious — The
Religious Element Overpowering the Political — Dread of Christian
Domination — False Statements by the Turkish Government —
Instances of Persecution and Enforced Conversion to Islam — A
Tremendous Moral Disaster — Efforts of the Government to Suppress
Reports.**

The previous chapters have been confined chiefly to the physical aspects of the massacres. There has been, however, another side that is even more appalling, and that is the moral and religious disaster. The question is often asked whether this is a religious persecution. The question is not an altogether easy one to answer. From one point of view it is purely religious, from another, purely political. The truth probably is, that in the East the two are so inseparably associated that it is impossible to distinguish accurately between them. To the Moslem, every Christian is either a slave or an enemy, to be taxed for service or to be destroyed. So long as the Armenians made no effort for political power, they were slaves; the moment they showed hostility to or impatience with Moslem rule, they became enemies. It made no difference whether that hostility was actual or not; if it had any existence in the minds of the Turks the result was the same. It is unquestionable that there was a widespread belief among the Turks that Moslem rule was in danger, not merely from the revolt of the Armenians, but from the assistance assured, as

they believed, to the Armenians by the European Powers. Hence, first of all, their hostility was directed against them, and so far it was distinctively political. They began to realize, however, that murder, pure and simple, was not going to accomplish their purpose. How was it to be done ? There was only one other method — forced conversion. - What this means, no one who has not had some personal knowledge of Mohammedan lands can fully imagine. To the political hate and savage desire for plunder was added the ferocity of Moslem propaganda. Any one who has read in history the record of religious persecutions can form a faint conception of what that means, but to understand to the full is given to few people. At the risk of occasional repetition we give some instances of the manifestation of this destructive religious character of the massacres. It will be noticed that parallel with forced conversion has gone the outraging of women. So long as the chief idea seemed to be the suppression of a supposed political revolt, or the looting of property, this was not so noticeable. The moment, however, that religious fanaticism came to the front, the most brutal sensuality was made manifest. A significant comment on Mohammedanism.

“At Chunkush, in the province of Diarbekir, there were 6,000 Armenian Christians. On the 4th of November, the first attack was made and the town was partially pillaged. On the 8th, 9th and 14th of November, these attacks on the Christian houses were repeated. The Protestant church, school and parsonage, and many other buildings were burned by the Turks. 880 Armenians were butchered, and the remainder were forced to accept Mohammedanism at the point of the sword.

“In Palu, in the same province, in the month of August, the governor called upon the Christian notables and told them that he had received orders to tell them that the Sultan had decided to introduce reforms, but that the reforms would be with the sword. This speech reported to the British Embassy at the time, led to the removal of the governor. On the 5th of November, this town was plundered by the Kurds and Turkish troops with but little shedding of blood. On the 9th of November, the attacking force returned, and out of a total Christian population of 2,400 they slaughtered 1,580 souls. The Protestant chapel was demolished, and the school and parsonage were taken as barracks for the troops. On the 10th of December, but 300 Christians were left in Palu, and they were at the point of perishing with hunger. The government issued bread to keep them alive, but the public ovens refused to sell to Christians. The policy seemed to be to keep the people at the point of deepest misery, in order to force them to become Mohammedans. The distribution of bread by the government consisted of the filling of several baskets with pieces of bread and emptying the baskets into the street for the people to scramble for the bread. A number of Christian families, driven by hunger, fled to the city of Harput, about thirty-five miles away, where there is a Governor-General. They hoped that this high Turkish official would at least give them protection and bread to eat, since it had been announced that the government intended to feed all the suffering ones. On arrival at Harput, however, they were bitterly

disappointed. They were simply put under arrest and sent back to starve at Palu. At



Image © ArmenianHouse.org

[caption] AFTER THE SLAUGHTER. Scene from an actual Photograph, showing how the able-bodied defenseless Armenians were butchered in great numbers and left where they fell.



Image © ArmenianHouse.org

[caption] BURYING THE ARMENIANS. A view of how thousands of the murdered Armenians were buried in great trenches after the massacres.

Severek, in the province of Diarbekir, out of a Christian population of 2,900, nearly all of the males, in all 750 persons, were killed. This left

the authorities free to regard all the women and children as Moslems, and they were distributed among the Mohammedan populace to be taken into their houses.

“At Urfa, after the massacre and pillage which took place on the 27th and 28th of October, the police went around from house to house in the Christian quarter announcing that the people must accept Mohammedanism. They carried axes to break open the doors. All who refused they killed on the spot. Those who accepted the offer were required to put white turbans on their heads and to hang white flags on their houses. The number of white flags displayed seemed innumerable after three days of this, sort of work. Shortly after this a storm arose which carried away many of the white flags. They were not renewed, since the people understood that the government would not recognize these forced conversions. But on the 28th and 29th of December, these people were attacked by the Turks and over 1,500 of them were killed as apostates from Islamism. At Albistan, in the same province, after the massacre began, the people were overpersuaded by the assurance that all the Christians in the empire were being killed, and nearly the whole Christian population accepted Mohammedanism on this representation.

“At Adiaman, in the province of Harput, on the other hand, -the same story was used without effect, and out of the Christian population of 800, only 20 were left alive. At Husenik, in the province of Harput, the Armenian priest was tortured to force him to become a Mohammedan. On his persistent refusal, and while he was still living, his body was obscenely mutilated, and at last the poor man found rest in death. The Protestant preacher in this village and a large number of the people accepted Mohammedanism in order to escape the fate inflicted upon this martyred priest. At Gamirgab, in the same province, after the Turks and Kurds had pillaged all the Christian houses, they burned 70 houses which could be fired without endangering the Turkish houses, and removed doors and windows from the remainder so as to render them uninhabitable. The head master of the government school in the place, one Ali Effendi, then called the Christians together, and told them he would order them massacred at once if they did not accept Mohammedanism. The people accepted the new religion, but appealed for relief to their bishop at Egin. On demand of the bishop, the governor ordered that these new converts should be released from their promise of conversion, and now the people live in hourly fear of massacre as apostates from the Mohammedan faith.

“At Arabkir, in the province of Harput, on the 6th of November, Turkish civilians aided by soldiers suddenly made an attack upon the Armenian shops in the market. Arabkir had an Armenian population of about 18,000, and a Turkish population of about 30,000. When the Turks began to attack the Armenian houses, the Armenians resisted. Then the authorities called in Kurds from the surrounding region and made a systematic destruction of the Christian quarters of the city. The horrible work lasted six days, and at the end of that time 4,000 Christians had

been killed, and 2,750 Christian houses had been burned. Many of the survivors accepted Islamism in order to escape. All alike, however, were stripped of everything they had in the world, and in some cases even of their clothing. The narrative of one of the survivors, an entirely trustworthy woman, gives a vivid impression of the horror of the experience: "On the 5th of November, our Turkish neighbors, with whom we have always been on good terms, came to tell us that orders had come to kill the Christians, but that seeing our house was next to theirs they would like to help us, and that if we would pay them for it they would defend us. After some bargaining it was agreed that we should pay them \$25.00 for the service. This was not easy to find, but we gathered all the money that we had and what jewels we possessed, and so satisfied them. On Tuesday the massacre began by an attack upon the market and then upon the houses. The roar of the firing and the shrieks of the women were awful, but our friends defended us. That night there was no sleep for us, for the attacks on the houses and the firing kept up all night. The next morning our Turkish friends said to us: 'We have fulfilled our promise, but the massacre is still going on, and we can defend you no longer unless you become Moslems. Otherwise you will all be killed.' The firing was going on all the time and houses were being set on fire, and the smoke made it seem as if the end of the world had come. I fell on my knees before my father, who was the only man in our household of nine people, and begged him not to swerve from his faith in Jesus Christ. He rebuked me for thinking such a thing of him. We all prayed for help and waited to see what would come. That day my father was killed, but they did not kill us because we were only women. But they made us go for three days into a house with a great many other women, while they robbed our house of everything. They did not burn the house because their own house would have burned also. After they had taken everything from our house, they let us go back into it, and thought themselves very kind for doing so. Crowds of Our friends who were left without shelter came to the house, and we have about 50 people in every room, all without bedding and all without food. What is to become of us ? "

